

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼԻՍ

Գևորգ Իսրայելյան

իրավաբանական գիտությունների թեկնածու,

«Հ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության ամբիոնի պետ, ոստիկանության փոխգնդապետ»

Իրավական պետության կառուցման արդի շրջանում պետության գերակա խնդիրներից են մարդու անվտանգության ապահովումը, նրա իրավունքների ու ազատությունների, հասարակության և պետության օրինական շահերի պաշտպանությունը: Վերջիններիս խախտման առավել վտանգավոր դրսևորումները հանցագործություններն են: Հանցավորության դեմ պայքարի ուղղություններից մեկը հանցագործությունների կանխարգելումն է: Հանցավորության կանխարգելումը պետական մարմինների, հասարակական միավորումների և այլ սուբյեկտների կողմից մշակվող և իրականացվող միջոցների ամբողջություն է՝ ուղղված շեղվող վարքի բոլոր տեսակների ծագմանն ու տարածմանը նպաստող պատճառների ու պայմանների հայտնաբերմանը և վերացմանը, ինչպես նաև այնպիսի կոնկրետ միջոցառումների մշակմանը և իրականացմանը, որոնք խոչընդոտում են հանցագործությունների կատարումը¹: Հանցավորության կանխարգելումն իրականացվում է մասնագիտացված և ոչ մասնագիտացված սուբյեկտների կողմից: Մասնագիտացված սուբյեկտների թվին է դասվում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանությունը: «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 2-ի առաջին մասով ամրագրված ոստիկանության խնդիրների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ իրավապահ այս մարմնի գործունեության հիմնական ուղղություններից մեկը հանցագործությունների և վարչական իրավախախտումների կանխարգելումն է: Ոստիկանության կանոնադրության 8-րդ կետը սահմանում է այդ մարմնի խնդիրների լուծմանն ուղղված գործառնությունները, որոնց թվին դասվում են հանցագործությունների և վարչական իրավախախտումների նախականիման, կանխման և խափանման ուղղությամբ Հայաստանի Հանրապետության ոստիկանության ծառայությունների ու տարածքային մարմինների կողմից իրականացվող կանխարգելիչ գործունեության ապահովումը, հանցագործությունների պատճառների և պայմանների վերհանումը, դրանց ուսումնասիրությունն ու վերացման համար միջոցների ձեռնարկումը և այլն: Նշված գործառնությունները կենսագործվում են ոստիկանության համապատասխան ստորաբաժանումների միջոցով:

Ոստիկանության նորաստեղծ ստորաբաժանումներից է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության համայնքային ոստիկանության ծառայությունը, որը պրոֆիլակտիկ ծառայության (տեղամասային տեսուչների) «իրավահաջորդն» է: Այն ներդրվել է Երևան քաղաքում 2012 թվականի հունիսի 1-ից,

¹ St' u Башкатов И. П., Филиппов М. Н. Проблемы профилактики девиантного поведения подростков // Организационно-правовые проблемы предупреждения преступности несовершеннолетних. Академия МВД России, М. – 1999, էջ 109:

իսկ մարզերում՝ 2013 թվականի նոյեմբերի 1-ից: Համայնքային ոստիկանության գործունեության կազմակերպման առնչությամբ ծավալվող հասարակական հարաբերություններն անմիջականորեն կարգավորվում են «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության համայնքային ոստիկանության գործունեության կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 18-ի N 1233-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 6 նոյեմբերի 2014 թվականի N 1254-Ն որոշմամբ: Այդ որոշման հավելվածի դրույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ համայնքային ոստիկանությունն իրականացնում է հանցագործությունների անհատական կանխարգելման միջոցառումներ: Մասնավորապես, հավելվածի 26-րդ կետը սահմանում է. «Համայնքային ոստիկանության տեսուչները, հանցագործությունների և վարչական իրավախախտումների պրոֆիլակտիկա իրականացնելիս, տեղամասի անձնագրում հաշվառում և անհատական պրոֆիլակտիկ միջոցառումներ են իրականացնում հետևյալ անձանց նկատմամբ՝ հետևյալ ժամկետներով՝

1) պատիժը կրելուց Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն պայմանական վաղաժամկետ ազատվածներին, ինչպես նաև ազատագրված վայրերից պատիժը լրիվ կրելուց հետո ազատվածներին՝ մինչև 1 տարի.

2) պատիժը կրելուց Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն պայմանական վաղաժամկետ ազատվածներին, որոնց վրա դրվել են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված որոշակի պարտականություններ՝ մինչև դատարանի կողմից նշանակված փորձաշրջանի ավարտը.

3) այն անձանց, որոնց նկատմամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 78-րդ հոդվածի համաձայն պատժի կրումը հետաձգվել է, և Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն պատիժը պայմանականորեն չի կիրառվել, որոնց վրա դրվել են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված որոշակի պարտականություններ՝ մինչև դատարանի կողմից նշանակված փորձաշրջանի ավարտը.

4) ընտանեկան-կենցաղային ոլորտում պարբերաբար իրավախախտումներ թույլ տվող անձանց, որոնք վտանգ են ներկայացնում շրջապատի համար՝ մինչև մեկ տարի.

5) առողջապահական հիմնարկներում հաշվառված՝ հարբեցողությամբ կամ թմրամոլությամբ տառապող անձանց՝ մինչև առողջապահական մարմիններում հաշվառումից հանելը.

6) առողջապահական հիմնարկներում հաշվառված, շրջապատի համար վտանգ ներկայացնող՝ հոգեկան հիվանդություններով տառապող անձանց՝ մինչև առողջապահական մարմիններում հաշվառումից հանելը.

7) պոռնկությամբ զբաղվողներին՝ մինչև մեկ տարի.

8) մշտական բնակության վայր չունեցող թափառաշրջիկներին, մուրացկաններին՝ մինչև մեկ տարի»:

Հաշվառման համար հիմք են համապատասխան փաստաթղթերը (դատական ակտ կամ որոշում և այլն) և տեղեկությունները (պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններից և ուսումնական հաստատություններից ստացված տեղեկություններ):

Հաշվառմանը պետք է հաջորդեն հետևյալ միջոցառումները.

1. Անհատական կանխարգելիչ միջոցների պլանավորումը:

Անհատական կանխարգելիչ աշխատանքի պլանավորման ընթացքում պետք է նախատեսել հետևյալ միջոցառումները.

- անձի և նրան շրջապատող միջավայրի հետ ծանոթություն (անձի ուսումնասիրում՝ անձին բնութագրող հատկանիշների վերաբերյալ տեղեկությունների ստացում, շրջապատող միջավայրի ուսումնասիրում կենսագործունեության բոլոր ոլորտներում (բնակավայր, ուսման և աշխատանքի վայրեր, ազատ ժամանցի վայր) և այլն),

- անհատական կանխարգելիչ միջոցների ընթացիկ իրագործում (հաշվառվածի հետ պարբերական (ամսական մեկ անգամից ոչ պակաս) հանդիպումների (բնակության, աշխատանքի վայրերում, ուստիկանության շենքում և այլն) և դաստիարակչական գրույցների անցկացում, անձի վարքի նկատմամբ վերահսկողության իրականացում բնակավայրում՝ հարցման ենթարկելով հարազատներին, հարևաններին և այլոց (ամսական մեկ անգամից ոչ պակաս), ուսման և աշխատանքի վայրերում՝ վարչակազմի, մոտ շրջապատի միջոցով անձի վարքի մասին պաշտոնական տեղեկության ստացմամբ և այլն),

- անհատական կանխարգելիչ ներգործության միջոցների վերահսկողության և արդյունավետության ստուգման միջոցներ (անձի վարքի մասին հարցումների ուղարկում ուսման, բնակության, աշխատանքի վայրեր, անձի վարքի, կենսակերպի մասին հարցումների անցկացում նրան շրջապատող անձանց, հարևանների, հարազատների, ծանոթների, վարչակազմի շրջանում և այլն)¹:

2. Կանխարգելման օբյեկտի ուսումնասիրումը:

Ուսումնասիրումը նպատակ է հետապնդում պարզել անձի սոցիալ-ժողովրդագրական հատկանիշները, անհատական հոգեբանական առանձնահատկությունները, հանցավոր և այլ հակաիրավական վարքագիծը, վերջինիս նպաստող գործոնները, հակահասարակական հակումները, հանցավոր փորձի առկայությունը հավաստող տվյալները, ֆիզիոլոգիական առանձնահատկությունները և հիվանդությունները, կենսապայմանները և մոտ շրջապատը: Անձի ուսումնասիրության նպատակով կիրառվում են հետևյալ մեթոդները՝ տարբեր փաստաթղթերին ծանոթանալը, անձի վարքագծի վերլուծությունը, նրան լավ ճանաչող քաղաքացիների հետ գրույցների անցկացումը և այլն²:

3. Անհատական վարքի կանխատեսումը:

Կանխատեսումը հատուկ կազմակերպված գործունեություն է, որի նպատակն է ստանալ հիմնավորված դատողություններ ապագայում կոնկրետ անձի վարքի հնարավոր տարբերակների կամ վիճակների մասին՝ մատնանշելով դրանցից առավել հավանականները³: Այն ունի հետևյալ մեխանիզմը. վերլուծության է ենթարկվում կոնկրետ անձի վարքն անցյալում և ներկայում՝ հիմք ընդունելով հանցագործի անձի ձևա-

¹ St'u Криминология. Учебник для юридических вузов. Под общей редакцией доктора юридических наук, профессора А. И. Долговой – М.: Издательская группа ИНФРА . М–НОРМА, 1997, էջեր 389-391:

² St'u Предупреждение преступлений и административных правонарушений органами внутренних дел: Учебник для студентов вузов, обучающихся по специальностям «Юриспруденция» и «Правоохранительная деятельность» / Под. ред. Кикотя В. Я., Лебедева С. Я. – М.: ЮНИТИ-ДАНА, 2009, էջեր 133-135:

³ St'u **Зырянов А. Я.** Прогнозирование преступного поведения как разновидность индивидуального прогнозирования: Проблемы изучения личности правонарушителя: Сборник научных трудов. – М.: ВНИИ МВД СССР, 1984, էջ 50:

վորման ընդհանուր օրինաչափությունների, նրա միկրոմիջավայրի վիճակի, հանցագործության կատարմանը նպաստող կամ խոչընդոտող գործոնների առկայության կամ բացակայության և կոնկրետ դեպքում այլ էական նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ տեղեկությունները, ինչի հիման վրա իրավասու սուբյեկտը հանգում է եզրակացության՝ որոշակի ժամանակահատվածում տվյալ անձի կողմից հանցագործության կատարման կամ չկատարման հավանականության մասին¹:

4. Անհատական կանխարգելիչ միջոցների իրագործումը:

Կառավարության նշված որոշման 30-րդ կետը սահմանում է անհատական կանխարգելիչ աշխատանքների միջոցները՝ հաշվառված անձանց հետ նրանց բնակության կամ ուսման վայրերում պարբերաբար հանդիպումներ, բացատրական և այլ աշխատանքներ:

Մեր կողմից կատարված հետազոտությունների արդյունքները վկայում են այն մասին, որ համայնքային ոստիկանության գործունեության կազմակերպման իրավական կարգավորման ոլորտում առկա են մի շարք թերություններ և բացթողումներ: Մասնավորապես.

1. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության համայնքային ոստիկանության գործունեության կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 18-ի N 1233-Ն որոշումն ուժը կորցրած ձանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 6 նոյեմբերի 2014 թվականի N 1254-Ն որոշման մեջ հանցագործությունների և վարչական իրավախախտումների անհատական կանխարգելումը նույնացվում է նախականիման հետ: Ինչպես հայտնի է, նախականիմումը (պրոֆիլակտիկան) հանցավորության հատուկ կանխարգելման ուղղություններից է, որը ենթադրում է հնարավոր իրավախախտման պատճառների ու պայմանների նկատմամբ ներգործություն²: Մինչդեռ անհատական կանխարգելումն առաջին հերթին կոնկրետ անձի հակաիրավական (հանցավոր) վարքի պատճառների ու պայմանների վրա ներգործության կանխամտածված միջոցների արդյունավետ համակարգի մշակումը և տևական ժամանակահատվածում իրագործումն է: Ընդ որում, անհատական կանխարգելման պարագայում հանցագործության կատարման հնարավորությունը կանխվում է նախ և առաջ ներքին (սուբյեկտիվ, անձնային), ապա նաև միկրոմիջավայրի՝ արտաքին (օբյեկտիվ) գործոնների վերացման միջոցով, որոնք պայմանավորում են հանցանքի կատարման մասին որոշման կայացումը³: Նշվածից ելնելով՝ անհրաժեշտ ենք համարում.

- ընդունել «Հանցագործությունների կանխարգելման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որը կսահմանի հանցավորության կանխարգելմանն առնչվող հիմնական հասկացությունները, ներառյալ՝ գործունեության քննարկվող տեսակի հասկացությունը, խնդիրները, ուղղությունները, միջոցները և հիմնարար նշանակություն ունեցող այլ դրույթներ, և որի վրա կհիմնվեն հանցավորության կանխարգելման գործըն-

¹ St'u Кирилов Д. А. Определение круга объектов индивидуальной профилактики преступлений // Совершенствование деятельности органов внутренних дел в условиях решительного усиления борьбы с преступностью /Сб. статей адъюнктов и соискателей/. – М. : ВЮЗШ МВД СССР. 1990, էջեր 162-163:

² St'u Профилактики правонарушений. Сост. Р. В. Шагиева. Издательство Казаньского университета, Казань, 1989, էջեր 20-21:

³ St'u Саркисов Г. С. Индивидуальная профилактика преступлений. – Ер.: Айастан, 1986, էջեր 11-15:

թացը կանոնակարգող իրավական այլ ակտերը. այդ օրենքը կբացառի նաև կանխարգելիչ գործունեության՝ բովանդակությամբ տարբեր ուղղությունների անտեղի նույնացումը,

- «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության համայնքային ոստիկանության գործունեության կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 18-ի N 1233-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 6 նոյեմբերի 2014 թվականի N 1254-Ն որոշման VI գլխագիրը՝ «Համայնքային ոստիկանության գործառնությունները հանցագործությունները և վարչական իրավախախտումները նախականելիս», փոփոխել հետևյալ շարադրմամբ. «Համայնքային ոստիկանության գործառնությունները հանցագործությունների և վարչական իրավախախտումների անհատական կանխարգելում իրականացնելիս», իսկ 26-րդ կետը շարադրել. «Համայնքային ոստիկանության տեսուչները, հանցագործությունների և վարչական իրավախախտումների անհատական կանխարգելում իրականացնելիս տեղամասի անձնագրում հաշվառում և կանխարգելիչ միջոցառումներ են իրականացնում հետևյալ անձանց նկատմամբ՝ հետևյալ ժամկետներով՝...»:

2. Կառավարության նշված որոշման 30-րդ կետը նախատեսում է. «Անհատական պրոֆիլակտիկ աշխատանքների նպատակն է հաշվառված անձանց հետ նրանց բնակության կամ ուսման վայրերում պարբերաբար հաղիպումների, բացատրական և այլ աշխատանքների միջոցով գերծ պահել նրանց նոր իրավախախտումներ կատարելուց»: Ինչպես վերը նշվեց, անհատական կանխարգելման առաջնային օբյեկտը անձն է, ով հակված է հակաիրավական վարք դրսևորելու: Սակայն պետք է նկատի ունենալ, որ նման անձից բացի՝ որպես անհատական կանխարգելման օբյեկտ պետք է դիտարկել նաև նրա վրա բացասաբար ազդող միկրոմիջավայրը: Ուստի, ինչպես առաջարկվում է մասնագիտական գրականության մեջ, անհրաժեշտ է կանխարգելել.

ա) միկրոմիջավայրի բացասական ազդեցությունն այն անձի նկատմամբ, ով չի կատարել հակաիրավական կամ հակաբարոյական արարքներ, սակայն կարող է կատարել, քանի որ նրան շրջապատում են մարդիկ, ովքեր հակահասարակական հայացքների կրողներ են և կատարում են իրավախախտումներ և հակաբարոյական արարքներ (սա հատկապես կարևոր է անչափահասների նկատմամբ աշխատանքներ իրականացնելիս),

բ) միկրոմիջավայրի բացասական ազդեցությունն այն անձի նկատմամբ, ով կատարում է հակաիրավական կամ հակաբարոյական արարքներ և մշտապես շփվում է իր վրա վնասակար ներգործություն ունեցող անձանց հետ, ինչը նրա գիտակցության մեջ ամրապնդում է հակահասարակական դիրքորոշումները,

գ) միկրոմիջավայրի բացասական ազդեցությունն այն անձի նկատմամբ, ով պատիժը կրել և նոր է ազատվել (սա հատուկ նշանակություն ունի կրկնահանցագործությունների կանխարգելման համար)¹:

Նշվածից ելնելով՝ առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության համայնքային ոստիկանության գործունեության կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 18-ի N 1233-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 6 նոյեմբերի 2014 թվակա-

¹ St' u **Антонян Ю. М.** Социальная среда и формирование личности преступника (неблагоприятные влияния на личность в микросреде). Академия МВД СССР, М., 1975, էջ 147:

նի N 1254-Ն որոշման 30-րդ կետը փոփոխել հետևյալ շարադրմամբ. «Անհատական կանխարգելիչ աշխատանքների նպատակն է հաշվառված անձանց հետ նրանց բնակության, ուսման կամ աշխատանքի վայրերում, ինչպես նաև հաշվառված անձանց վրա բացասաբար ազդող միկրոմիջավայրի տարրերի հետ պարբերաբար հաղիպումների, բացատրական և այլ աշխատանքերի միջոցով գերծ պահել այդ անձանց նոր իրավախախտումներ կատարելուց»:

3. Ակնհայտ է, որ անհատական վարքի կանխատեսումը և անհատական կանխարգելիչ միջոցառումների իրականացումը հոգեբանական խնդիր է, որի լուծումը պահանջում է մասնագիտական հմտություններ: Ուստի առաջարկում ենք ոստիկանության տարածքային ստորաբաժանումներում ստեղծել հոգեբանների հաստիքներ: Այս մասնագետները արդյունավետ աշխատանք կիրականացնեն հանցագործությունների և վարչական իրավախախտումների անհատական կանխարգելման աշխատանքներում: Բացի այդ, հոգեբաններն անգնահատելի ծառայություն կմատուցեն ոստիկանության ծառայողների հոգեբանական ապահովման, մասնավորապես նրանց մասնագիտական ձևախեղման կանխարգելման, ինչպես նաև տուժողների, հայտնաբերված թիրախային խմբերի (առանց հսկողության մնացած երեխաներ, մուրացիկներ, թափառաշրջիկներ, ալկոհոլամոլներ, թմրամոլներ, մարմնավաճառներ և այլն) հետ աշխատանքներ իրականացնելիս:

ФУНКЦИИ ОБЩИННОЙ ПОЛИЦИИ ПРИ ОСУЩЕСТВЛЕНИИ ИНДИВИДУАЛЬНОГО ПРЕДОТВРАЩЕНИЯ ПРЕСТУПЛЕНИЙ

Геворг Исраелян

Кандидат юридических наук,

Начальник кафедры гражданского права и гражданского процесса

юридического факультета Академии образовательного

комплекса полиции Республики Армения

Полиция Республики Армения относится к числу специализированных субъектов предотвращения преступности. В структуре полиции создана новая служба – общинная полиция, одной из важнейших задач которой является предотвращение преступности. Общинная полиция – это то подразделение полиции, которая носит основную тяжесть индивидуального предотвращения преступлений и административных правонарушений. Индивидуальное предотвращение предполагает разработку и реализацию мер по отношению лиц, которые склонны совершать преступления, и неблагоприятно влияющей на них микросреды. Исследования автора свидетельствуют о том, что отсутствуют некоторые предпосылки для организации эффективной деятельности общинной полиции. В частности автор считает необходимым: 1. принять закон «О предотвращении преступлений», из которого будут исходить иные правовые акты, регулирующие процесс предотвращения преступлений; 2. внести дополнения в законодательство, регулирующее организацию деятельности общинной полиции, с целью расширить круг объектов индивидуального предотвращения преступлений, так как в действующем законодательстве нет упоминаний о неблагоприятно влияющей на лиц микросреде, как об объекте индивидуального предотвращения преступлений; 3. в территориальных подразделениях поли-

ции создать должности психологов: психологи не только окажут неоценимую помощь в процессе проведения индивидуального предотвращения преступлений, в частности при прогнозировании преступного поведения, но и в процессе предотвращения профессиональной деформации сотрудников полиции и при проведении работ с потерпевшими от преступлений.

FUNCTIONS OF THE COMMUNITY POLICE IN EXERCISING INDIVIDUAL PREVENTION OF THE CRIMES

Gevorg Israelyan

Candidate of Legal Sciences,

Head of the Department of Civil Law and Civil Procedure Of the Law Faculty of the Academy of the Police Educational Complex of the Republic of Armenia

One of the specialized subjects of the crime prevention is considered Police of the Republic of Armenia. In the structure of Police a new unit - community police was created. One of the most important objectives of the community police is a prevention of the crime. Community police is a unit of police which bears the main burden of individual prevention of the crimes and administrative offences. Individual prevention supposes development and implementation of measures against individuals which tend to commit crime and have adverse effect on their microenvironment. The research of the author indicates that some prerequisites for the organization of effective action of the community police are lacking. In particular, the author considers that it is necessary: 1. to adopt a law on "Prevention of Crimes" based on which other legal acts will proceed that will regulate the process of crime prevention; 2. to make an amendment in the legislature which regulate the organization of the action of the community police with a view to enlarge the circle of the objects of the individual prevention of the crime because in the current legislature there is no mention about the microenvironment as an object of the individual prevention of the crime which have adverse effect on individual; 3. to create a position of psychologists in the territorial subdivisions of police. Psychologists not only can provide invaluable assistance during the process of conduct of the individual prevention of the crime, in particular in forecasting criminal behavior but also in the process of prevention of the professional deformation of police personal and in the process of working with the victims of crimes.

Բանալի բառեր՝ *նստիկանություն, համայնքային նստիկանություն, հանցազրծությունների կանխարգելում, հանցազրծությունների անհատական կանխարգելում, հանցազրծությունների անհատական կանխարգելման օբյեկտ, հանցազրծություն կատարելու հակումներ ունեցող անձ, անբարենպաստ ազդեցություն գործող միկրոմիջավայր:*

Ключевые слова: *полиция; общинная полиция; предотвращение преступлений; индивидуальное предотвращение преступлений; объект индивидуального предотвращения преступлений; лицо, склонное к совершению преступлений; неблагоприятно влияющая микросреда.*

Key words: *Police; Community police; Prevention of the crimes; Individual prevention of the crimes; Object of the individual prevention of the crimes; Individual which tends to commit crime; Microenvironment having adverse effect.*